ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ռազմարդյունաբերության կոմիտեի կարիքների համար բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2021/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «27» սեպտեմբերի 2021թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արտակ Բաղդասարյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ռազմարդյունաբերության կոմիտեի գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպման վարչության պետ

հանձնաժողովի անդամներ՝

Բաբկեն Ոսկանյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ռազմարդյունաբերության կոմիտեի գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպման վարչության գլխավոր մասնագետ

Հրաչ Բաբախանյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության ավագ մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի ավագ մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2021/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա (25.09.2021թ.) ժամը 10:00-ն,

1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

1.3 էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 27.09.2021 թ., ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	բենզին, ռեգուլյար	480 000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
1	«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	Ք. Երևան, Ե. Կողբացու 30

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6.«ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2021/10» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	400 000	20 %	480 000	400 000	20 %	480 000	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 27.09.2021թ. և Համակարգի կողմից առաջին տեղն զբաղեցրած մասնակից է համարվել «ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարությունների/ առկայության մասին.

«ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերը էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունները Հավելված 1-ը և իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2-ը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), իրական շահառուների մասին հայտարարագիրը (Հավելված 1.2) և Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց ***«ՖԼԵԾ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,***

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել համապատասխան պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

_____ Արտակ Բաղդասարյան

Անդամներ՝

_____ Բաբկեն Ոսկանյան

_____ Հրաչ Բաբախանյան

Քարտուղար՝

_____ Օֆելյա Ասատրյան